ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը, որը գտնվում է ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3 հասցեում, ստորև ներկայացնում է <<ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-1/2018Ն-3-1>> ծածկագրով բաց մրցույթ ընթացակարգի արդյունքում 2017թ նոյեմբերի 29-ին կնքված պայմանագրում 2018թ հունվարի 28-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: Ֆինանսական միջոցների նախատեսում

Փոփոխության նկարագրություն: 2018թ-ի շինարարական աշխատանքների ֆինասական միջոցների նախատեսում, Համաձայնագրի գինը կազմում է 22,240,000.00 ՀՀ դրամ

Փոփոխության հիմնավորում: *ՀՀ 2018 թ. պետական բյուջեի մասին օրենք /ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1717-Ն որոշում/:*

ՀՀ գնումների մասին օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետ

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Սամվել Թամրազյանին:

Հեռախոս՝ 010 59-00-47

Պատվիրատու՝ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-1/2018Ն-3-1
Պետության կարիքների համար շինարարական աշխատանքների նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման աշխատանքների կատարման

ք. Երևան <<28>> հունվարի 2018թ.

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Ս. Ամիրխանյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<ԱՐՄՍՏՐՈՅ>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Առաքելյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, միասին՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ դեկտեմբերի 29-ի թիվ 1717 որոշմամբ, ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և ընդունելով 2017թ. նոյեմբերի 29-ին կնքված ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-1/2018Ն-3 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 և 7.13 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան և գործողության ժամկետը

1.1 Կատարողը պարտավորվում է Պայմանագրով և սույն Համաձայնագրով սահմանված կարգով Պատվիրատուի հանձնարարությամբ իրականացնել Պայմանագրով նախատեսված Մ-4, Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ24+200-կմ72+000 7կմ հատվածի հիմնանորոգման աշխատանքների նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման աշխատանքներ, Մ-16, Մ-4-Ոսկեպար-Նոյեմբերյան-Մ-6 միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ0+000-կմ44+000 առանձին հատվածների հիմնանորոգման աշխատանքների նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման աշխատանքների կատարումը (այսուհետև՝ Աշխատանքներ)՝ համաձայն Պայմանագրի N1 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի և Աշխատանքների արդյունքը հանձնել Պատվիրատուին, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել Աշխատանքները և վճարել դրանց համար:

1.2 Պայմանագրի N1 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

ա) տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված <<Աշխատանքի կատարման ժամկետը>> սյունակում <<պայմանագրով>> բառերը փոխարինել <<համաձայնագրով>> բառերով:

բ) տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի <<Աշխատանքի կատարման ժամկետի սկիզբը>> սյունակում <<Պայմանգիրը ուժի մեջ մտնելուց հետո>> բառերը փոխարինել <<ֆինանսական միջոցներ նախատեսվելու օրը>> բառերով, իսկ <<Աշխատանքի կատարման ժամկետի ավարտը>> սյունակում <<պայմանագրով>> բառը փոխարինել <<համաձայնագրով>> բառով :

1.3 Աշխատանքների հանձնում-ընդունումը կատարվում է Պայմանագրով սահմանված կարգով՝ կարգի պահանջներին համապատասխան:

2 Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1. Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 22240000 (քսաներկու միլիոն երկու հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ, ընդ որում՝

-6-րդ չափաբաժին Մ-4, Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ24+200-կմ72+000 7կմ հատվածի հիմնանորոգման աշխատանքների նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման աշխատանքներ ՝ 7800000 (յոթ միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ,

-9-րդ չափաբաժին՝ Մ-16, Մ-4-Ոսկեպար-Նոյեմբերյան-Մ-6 միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ0+000-կմ 44+000 առանձին հատվածների հիմնանորոգման աշխատանքների

նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման աշխատանքներ՝ 14440000 (տասնչորս միլիոն չորս հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ,

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

2.2 Պատվիրատուն իրեն հանձնված Աշխատանքների դիմաց վճարում է Պայմանագրով նախատեսված կարգով՝ սույն Համաձայնագրի հավելվածին՝ ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցին համապատասխան:

3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները, այդ թվում Աշխատանքների հանձնման-ընդունման հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

3.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.3 Սույն համաձայնագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի հավելվածը հանդիսանում է սույն համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.4 Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3 Կենտրոնական Գանձապետարան Հ/Հ 900011005718 ՀՎՀՀ 02505518	«ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ ՀՀ, ք. Սիսիան, Ա. Մանուկյան 15 «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ Հ/Հ 1150002922490100 ՀՎՀՀ 09809552
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված
<< >> 2018թ. կնքված
N ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-1/2018Ն-3-1 համաձայնագրի

Ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույց

/ՀՀ դրամ/

ՀՀ	Ձեռքբերվող աշխատանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2018թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												Ընդամենը տարի
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
[redacted]														
6	Մ-4, Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ24+200-կմ72+000 7կմ հատվածի հիմնանորոգման աշխատանքների նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման աշխատանքներ	7800000	7800000	7800000	7800000	7800000	7800000	7800000	7800000	7800000	7800000	7800000	7800000	7800000
9	Մ-16, Մ-4-Ոսկեպար-Նոյեմբերյան-Մ-6 միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ0+000-կմ44+000 առանձին հատվածների հիմնանորոգման աշխատանքների նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման աշխատանքներ	14440000	14440000	14440000	14440000	14440000	14440000	14440000	14440000	14440000	14440000	14440000	14440000	14440000

Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական
տեխնոլոգիաների նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3
Կենտրոնական Գանձապետական
ՀՎՀ 90001100571800
ՀՎՀՀ 02565084

ԿԱՏԱՐՈՂ

<<ԱՐՄՍՏՐՈՅ>> ՍՊԸ
ՀՀ, ք. Սիսիան, Ա. Մանուկյան 15
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
ՀՎ 1150002922490100
ՀՎՀՀ 09809552

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Նախագծա-նախահաշվային
փաստաթղթերի ճշակում և
շինարարության որակի
տեխնիկական հսկողություն

ԱՐՄՍՏՐՈՅ

ք. Երևան, Թումանյան 32/1 Հեռ./Ֆաքս (+374) 60 508800 Էլ.հասցե՝ armshin_ltd@mail.ru

№ 94/17 «28» 11 2017թ.

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական
տեխնոլոգիաների նախարարության աշխատակազմի
ղեկավար պարոն՝ Ս. Ամիրխանյանին

Հարգելի պարոն Ամիրխանյան

Ձեր հաստատմանն եմ ներկայացնում N ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-1/2018Ն-3 ծածկագրով պետության կարիքների համար նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման աշխատանքների կատարման պետական գնման պայմանագիրը՝ 2 օրինակից:

Հարգանքներով՝

«ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ա. Առաքելյան

«ԱՐՄՍՏՐՈՅ»
"АРМСТРОЙ"
"ARMSTROY"
01803552